https://armenianweekly.com/2020/10/08/shushis-ghazanchetsots-cathedral-bombed/?fbclid=IwAR0vkV4benU9LUmhTFp_k5W7-BPWFIlGkSrZtNeJPtXJUKX8kL393XC36FM

Հրթիռակոծվել է Շուշի Սուրբ Ղազանչեցոց մայր տաճարը

Ղազանչեցոց եկեղեցին հրթիռակոծվելուց հետո

Արցախի Ղազանչեցոց տաճարը, կամ ինչպես հայտնի է՝ Սուրբ Ամենափրկիչ տաճարը, լուրջ վնասներ է կրել հոկտեմբերի 8-ին ադրբեջանական զինուժի կողմից իրականացված երկու հրթիռակոծությունների հետևանքով: Ավերածությունը լուսաբանող տեսանյութերը և նկարները փաստում են արտաքին և ներքին մեծ ավերածությունների մասին, ներառյալ կոտրված նստարանները, ամենուրեք քանդված պատերի մնացորդները, մասամբ փլված առաստաղը:

Հայաստանի պաշտոնյաները միաձայն դատապարտեցին Արցախի մշակութային և կրոնական ժառանգության, պատմական խորհրդանիշի վրա հարձակումը՝ որպես միջազգային իրավունքի խախտում և Ադրբեջանի կողմից հայկական մշակութային հիշողության օրինաչափության ոչնչացման շարունակություն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայտարարություն է տարածել, որում մասնավորապես ասվում է.- «Անտեսելով բոլոր միջազգային պարտավորությունները՝ Ադրբեջանը թիրախավորել է Արցախի սրբավայրերը, պատմամշակութային ժառանգությունը՝ այդպիսով բացահայտելով իր դատապարտելի և ավանդական քաղաքականությունը՝ ուղղված Արցախի հայաթափմանը և հայկական մշակութային շունչը այնտեղից ոչնչացնելուն»:

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը իր վարչակազմին հանձնարարելով վերանորոգել տաճարը՝ հայտարարել է.«Վանդալիզմի այս դրսևորումը դեմ է Աստծո և մարդկության օրենքներին»: Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը իր Թվիթերյան էջում հանդես է եկել կոչով, որում ասվում է. «Ես կոչ եմ անում տարբեր երկրներում ապրող մարդկանց,կրոնի և քաղաքականության նվիրյալներին,հնարավորինս արագ ու խստորեն արձագանքել խնդրին՝ Թուրքիայի և վարձկան ահաբեկչության կողմից աջակցվող Ադրբեջանի Արցախի՝ Շուշի քաղաքի, Ղազանչեցոց տաճարի,որպես մշակութային և կրոնական ժառանգության վայր ռմբակոծելու համար»:

Սուրբ Ղազանչեցոց տաճարը Արցախի ժողովրդի համար հոգևոր նշանակության վայր է՝ ոչ միայն իր սրբադասման շնորհիվ, այլև երկրի ինքնորոշման համար մղվող պայքարի ողջ պատմության ընթացքում ունեցած դերակատարության: 19-րդ դարի այս տաճարը պղծվեց և լուրջ վնասվեց 1920 թվականի Շուշիի կոտորածների ժամանակ: 1989-1992 թվականներին Արցախյան ազատամարտի ընթացքում եկեղեցին օգտագործվել է որպես զինանոց Շուշիի ադրբեջանական զինուժի համար, մինչդեռ քաղաքն օգտագործվել է որպես հենակետ Ստեփանակերտը հրետանակոծելու համար: 1992-ին՝ Շուշիի ազատագրումից հետո, հայկական ուժերը հետ գրավեցին և վերականգնեցին վնասված տաճարը:

Սուրբ Ամենափրկիչ տաճարի քահան տեր Անդրեասը տաճարը կրկին ավերակ տեսնելով իր ցավն է հայտնել Associated Press-ին.-«Ես ցավ եմ զգում, որ մեր գեղեցիկ տաճարի պատերը քանդվում են:Ես ցավ եմ զգում, որ այսօր աշխարհը չի արձագանքում այն ամենին, ինչ տեղի է ունենում այստեղ, և որ մեր տղաները զոհվում են ՝ պաշտպանելով մեր հայրենիքը»:

Պատերազմական դրության ժամանակ միտումնավոր մշակութային արժեքների դեմ ուղղված թշնամական գործողություններն արգելված են Հաագայի 1954 թ.-ի կոնվեկցիայով. մշակութային արժեքների՝ զինված բախումների արդյունքում, պաշտպանության համար, որի կողմերն այսօր հանդիսանում են Հայաստանն ու Ադրբեջանը: Այնուամենայնիվ, Հայաստանի ղեկավարությունը վաղուց տեղյակ է Ադրբեջանի կառավարության որդեգրած քաղաքականությանը՝ հայկական հուշարձանների քանդումը: Սուրբ Ղազանչեցոց տաճարի ռմբակոծությունը և Արցախում քաղաքացիական բնակավայրերի և օբյեկտների դեմ շարունակվող ռազմական ագրեսիան դատապարտող հայտարարության մեջ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը հիշեցրել է.- «Ադրբեջանը Ամբողջությամբ ոչնչացրել է հայկական մշակութային ժառանգությունը Նախիջևանում և հայ ժողովրդի պատմական հայրենիքի այլ մասերում»: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունն անդրադարձել է նաև Նախիջեւանում հայկական մշակութային ժառանգության ոչնչացմանը: Նախիջևանի հանրապետությունը, որը գտնվում է Ադրբեջանի իրավասության տակ 1920 թվականից, Ադրբեջանի կառավարությունը համակարգված արշավ է ձեռնարկել 1997-2006թթ.-ին՝ ջնջելու տարածաշրջանի հայկական արմատները՝ հազարավոր խաչքարեր, տապանաքարեր և ոչնչացնելով տասնյակ միջնադարյան եկեղեցիներ:

Մայր տաճարի վնասված ենթակառուցվածքներից բացի, երկրորդ հրթիռակոծության ընթացքում վիրավորվել են երեք լրագրողներ, ովքեր այդ պահին տաճարում էին՝ լուսաբանելու առաջին հրթիռակոծությից առաջացած ավերածությունները: Ռուսական Segodnya.ru լրատվական ծառայության գլխավոր խմբագիր Յուրի Կոտենոկը ստացել է ծանր վնասվածքներ և վիրահատվում է Ստեփանակերտում: Վիրավորվել են նաև Ռուսաստանի քաղաքացի, պատերազմական մեկնաբան Լեւոն Արզանովը և նրանց ուղեկցող հայազգի Հրանտ Բաղալյանը:

Սկսած պատերազմի առաջին իսկ օրից՝ Սեպտեմբերի 27-ից, սա առաջին դեպքը չէ, երբ Ադրբեջանական ուժերի կողմից թիրախավորվում են Արցախ ժամանած միջազգային լրագրողները: Հոկտեմբերի 1-ին ադրբեջանական հրթիռակոծման արդյունքում Մարտունիում վիրավորվեցին ֆրանսիական Le Monde օրաթերթի երկու լրագրողներ: Որոնցից մեկը ծանր վիրավորում էր ստացել և Ստեփանակերտի փրկարարական կայանում ենթարկվել շտապ վիրահատության: Հինգշաբթի օրը լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ, ՀՀ ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը ուղղակիորեն իր երախտագիտությունն է հայտնել դահլիճում գտնվող միջազգային լրագրողներին ասելով.-

«Առաջին իսկ օրվանից իմանալով, որ ձեր կյանքը հնարավոր վտանգի տակ եք դնում, դուք գնում եք Ստեփանակերտ և Շուշի՝ աշխարհի համար լուսաբանելու իրականությունը»:

Միևնույն ժամանակ, շարունակվում են Արցախի՝ մասնավորապես մայրաքաղաք Ստեփանակերտի, քաղաքացիական բնակավայրերի անխնա գնդակոծությունները: Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն իրականացրել է մանրակրկիտ փաստահավաք առաքելություն՝ կապված քաղաքացիական կորուստների հետ: Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում ընդհանուր առմամբ 20 խաղաղ բնակիչ է զոհվել, 93-ը վիրավորվել են (73-ը՝ ստացել ծանր վնասվածքներ): Վնասվել է ավելի քան 4600 մասնավոր անշարժ սեփականություն (ներառյալ բնակելի տներ և խանութներ), 430 տրանսպորտային միջոց և 750 հասարակական օբյեկտներ:

Նույն ուժգնությամբ մարտերը շարունակվում են շփման գծի ողջ երկայնքով: ՀՀ ՊՆ մամլո խոսնակ Շուշան Ստեփանյանի խոսքով ՝ Հայաստանի Վարդենիսի շրջանում հայտնաբերվել և ոչնչացվել են ադրբեջանական զինուժի կողմից շահագործվող յոթ անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ): Արցախի Պաշտպանության նախարարությունն այսօր հրապարակել է մարտական գործողություններում զոհված երեսուն նոր զինծառայողի անուն:(հեղ. 08/10/2020 դրությամբ)

Շվեյցարիայի Ժնև քաղաքում, նախատեսված էր Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների (Ֆրանսիա, Ռուսաստան և ԱՄՆ) ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելու իր երկրի դիրքորոշումը հակամարտությունների կարգավորման հարցում: Հանդիպմանը նախորդել է Ժնև քաղաքային խորհրդի կողմից ընդունված «Լեռնային Ղարաբաղում հայերն ունեն ապրելու և ինքնորոշման իրավունք» վերնագրով բանաձև, որը դատապարտում է Ադրբեջանի շարունակական ագրեսիան Արցախի դեմ և պահանջում է կառավարությունից սառեցնել Ալիևների ընտանիքի ունեցվածքը Շվեյցարիայում:

Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանն էլ Aysor.am-ին տված հարցազրույցում ասել է,-«Սա ցեղասպան քաղաքականություն է: Թիրախավորում են քաղաքացիական շենքերը, թիրախավորում են խաղաղ բնակիչներին, հիմա էլ եկեղեցիներին են թիրախավորում: Սա նաև մշակութային ցեղասպանություն է»:

Նա նշեց՝ հակառակորդը պետք է հստակ իմանա, որ եկեղեցուն հարվածելով՝ երբեք չի կարող հայի հավատը պակասեցնել: «Մեր եկեղեցուն հարվածելով՝ մեր հավատը չեն պակասեցնելու: Թող իմանան, որ հարվածելով Աստծո տանը՝ գործ են ունենալու Աստծո հետ», - ասաց Դավիթ Բաբայանը:

Թարգմանությունը՝Դոլարես Հովհաննիսյանի

Ղեկավար՝ Հասմիկ Մատիկյան